

Մարգուշ Միրումյան

*Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ mirumyan1951@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2023.1-155

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱԿԵՐՊՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են փոխակերպման այն դեպքերը, երբ միջուկային նախադասություններն ու փոխակերպները կատարում են նախադասության գլխավոր անդամների և գոյականական անդամի լրացումների պաշտոններ: Դիտարկվում են միջուկային միավորների և փոխակերպների շարահյուսական գործառույթները հայերենի լեզվական նյութի շրջանակներում՝ *նախադասություն > բառակապակցություն > բարդություն և նախադասություն > բառակապակցություն > ածանցավոր բառեր* կտրվածքներով:

Երբ սերող նախադասությունը (փոխակերպման ելակետը) կատարում է որոշակի շարահյուսական պաշտոններ, ապա այդ դերը կատարում են նաև փոխակերպները՝ բառակապակցություններն ու բարդությունները (բարդ և ածանցավոր բառերը): Ըստ այդմ՝ դիտարկվում են այն դեպքերը, երբ դիտարկվող լեզվական միավորները հանդես են գալիս ենթակայի և վերադրի, ինչպես նաև որոշի, հատկացուցչի և բացահայտչի պաշտոններով: Փոխակերպման իրողությունը ներկայացվում է շարահյուսական ծավալուն կառույցներով, որպեսզի հստակ դառնա այդ միավորների բովանդակային պլանը, երբ փոխվում է նրանց արտահայտության պլանը:

Հիմնաբառեր. փոխակերպում, փոխակերպներ, նախադա-

սություն, բառակապակցություն, բարդություն, ածանցավոր բառեր, ենթակա, վերադիր, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ:

Ներածություն

Լեզվի զարգացման յուրաքանչյուր մակարդակ կամ աստիճան համապատասխանում է մտածողության զարգացման աստիճաններին. լեզվական համակարգում կատարվող փոփոխություններն ու տեղաշարժերը պայմանավորված են մտածողության զարգացման տարբեր աստիճաններով: Այդ կապակցությամբ Գ. Ջահուկյանը նկատում է. «Շարահյուսական արտահայտության եղանակների զարգացման յուրաքանչյուր նախորդ էտապ պահպանվում է յուրաքանչյուր հաջորդ էտապին անցնելիս՝ ձեռք բերելով գործառական տարբերակում: Սա նշանակում է, որ ասույթների գործառական ձգգրիտ դասակարգման դեպքում առանձնացվող տիպերը կարտացոլեն հաջորդական փուլեր» (Ջահուկյան, 1973, էջ 549–550):

Լեզվի մակարդակային միավորների տեղաշարժերն ու փոփոխությունները, ի թիվս այլ կարգի արդյունքի, հանգեցնում են տարբերակային ձևերի առաջացմանը, որոնք, տարբերվելով արտահայտության պլանում, նույնական են բովանդակության պլանում: Լեզվում տարբերակային միավորներ առաջանում են մի շարք գործոնների հետևանքով, որոնցից մեկն է փոխակերպումը:

Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ¹: Բարդությունների համար այդպիսի կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները. «Բարդությունները կարելի է դիտել որպես միջուկային նախադասություններից սերված երկրորդական նախադասությունների, բառակապակցությունների և դերբայական դարձվածքների հետագա փոխակերպման արդյունք (Ջահուկյան, 1973, էջ 565)»: Ըստ սերող քերականության սկզբունքի՝ ելակետային միավորը կոչվում է *միջուկային անդամ* (սերող կաղապար). (օրինակ՝ ներգործական նախադասությունը՝ կրավորական նախադասության համար, բառակապակցությունը՝ բարդության համար), իսկ սերման արդյունքը՝ *փոխակերպներ* (որպես սերման հետևանք). (օրինակ՝ կրավորական նախադասությունը՝ որպես ներգործական նախադասության փոխակերպման արդյունք, բարդությունը՝ որպես բառակապակցության փոխակերպման արդյունք և այլն):

Մեթոդ

Աշխատանքը կատարված է համաժամանակյա հետազոտության մեթոդի ներքին վերականգնման եղանակով: Փոխակերպումները քննվել են երեք կտրվածքով. նախ ցույց են տրվել փոխակերպման գործընթացի սերիչ կաղապարները (նախադասությունները), ապա դրանցից սերված առաջին փո-

1 Փոխակերպման մասին տես Հ.Պետրոսյան և որիշներ, Լեզվաբանական բառարան, Ե., 1975: Օ.Ս. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969. В.Д. Стариченок, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008. Լ.Խաչատրյան, Լեզվաբանական բառարան, Ե., 2021:

խակերպները (բառակապակցությունները), ապա փոխակերպման վերջին քայլը (բաղադրությունները՝ բարդ և ածանցավոր տարբերակներով): Բացահայտվել են փոխկապակցված լեզվական միավորների գործառական ընդհանրությունները:

Արդյունքներ և քննարկում

Փոխակերպման գործընթացը պայմանավորված է լեզվի տնտեսման սկզբունքով (Խաչատրյան, 2016, էջ 195). ըստ այդմ՝ լեզուն ձգտում է հնարավորինս նվազ միջոցներով շատ իմաստներ արտահայտել կամ երկար ձևերի փոխարեն գործածել կարճ ձևեր: Այդ գործընթացն ընդգրկում է նաև *նախադասություն – բառակապակցություն – բարդություն* անցման աստիճանները, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճաններ են և ներկայանում են աստիճանակարգային հարաբերակցությամբ (Պետրոսյան, 1987, էջ 607): Այս կարգի փոխակերպումը կոչվում է *նախադասության արտաքին փոխակերպում*, ի հակադրություն *նախադասության ներքին փոխակերպման*, որ ընդգրկում է հարցական և բացականչական նախադասությունների (որպես փոխակերպների) հարաբերությունը պատմողականներին, ժխտականներին՝ հաստատականներին, կրավորական կառուցվածքներին՝ ներգործականներին, ուղղակի խոսքի հարաբերությունը անուղղակիներին և այլն (Հմմտ. Ջահուկյան, 1973, էջ 529): Երբ որոշակի նախադասությունը փոխակերպվում է բառակապակցության, վերջինս էլ՝ բարդության, այդ դեպքում ունենք միևնույն հասկացության տարբեր լեզվական դրսևորումներ, որոնք դիտվում են քերականական հոմանիշներ. նախադասություն > բառակապակցություն փոխակերպման դեպքում՝ շարահյուսական հոմանիշներ, բառակապակցություն–բարդություն փոխակերպման դեպքում՝ բառաբերականական հոմանիշներ (վերջինս՝ այնքանով, որքանով բառակապակցությունը շարահյուսական միավոր է, բարդությունը՝ բառային մակարդակի):

Միջուկային նախադասության փոխակերպները՝ երկրորդական նախադասությունները, բառակապակցությունները, բարդությունները, շարահյուսական մակարդակում կատարում են նույն գործառույթները. հանդես են գալիս շարահյուսական նույն պաշտոններով:

Ինչպես նշեցինք, միջուկային նախադասությունները սերիչ կաղապարներ են բառակապակցությունների համար, վերջիններս՝ բարդությունների համար՝ հանդես գալով շարահյուսական մակարդակում՝ երկաստիճան փոխակերպման ձևաչափով, ելակետային միավորներն ու փոխակերպներն ունեն նույն պաշտոնակրությունը, որ խոսում է տարբերակային ձևերի համագործառական ընդհանրության մասին:

Ա) Նախադասության գլխավոր անդամների դեր կատարող սերող միավորներ և փոխակերպներ

Սերող միավորներն ու փոխակերպները կարող են հանդես գալ նախադասության գլխավոր անդամների դերով՝ կատարելով *ենթակայի և վերադրի պաշտոններ*:

Ենթակայի և վերադրի դեր կատարող ոչ բոլոր երկրորդական նախադասությունները կարող են փոխակերպվել բառակապակցության և բարդության. որոշ նախադասություններ ունեն փոխակերպման սահմանափակումներ: Փոխակերպվում են միայն այն երկրորդական նախադասությունները, որոնց գլխավոր նախադասությունն ունի ձևական անդամ (ենթակայի կամ վերադրի պաշտոնով): Մյուս կողմից՝ այդպիսի բարդ նախադասության երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը պետք է լինի ներգործական սեռի, որը փոխակերպվող բառակապակցության մեջ վերածվում է ենթակայական կամ հարակատար դերբայների, վերջինս էլ բարդության մեջ կատարում է բայահիմքի դեր: Դիտարկենք հետևյալ նախադասությունները:

Եկավ նա, ով լուր էր բերում – (ենթակա) > եկավ լուր բերողը (ենթակա) > եկավ լրաբերը (ենթակա):

Սուրհանդակը նա է, ով լուր է բերում (վերադիր) > սուրհանդակը լուր բերողն է (վերադիր) > սուրհանդակը լրաբերն է (վերադիր):

Դիտարկենք ենթակայի և վերադրի դերով հանդես եկող հետևյալ փոխակերպները:

Ենթակա. միջուկային նախադասությունից սերված բառակապակցության մեջ ենթակայի պաշտոն կատարում է դերբայական դարձվածը (բառակապակցությունը), որի գերադաս անդամն արտահայտվում է ենթակայական կամ հարակատար դերբայով, իսկ բարդության պլանում ենթակայի դերը կատարում է բայահիմքը:

Ենթակայական դերբայով. ...

...նա, ով խաղում է լարերի վրա > լարերի վրա խաղացողը > լարախաղացը,

... նա, ով հաց է թխում > խաց թխողը > հացթուխը,

...նա, ով բախտ է գուշակում > բախտ գուշակողը > բախտագուշակը,

...նա, ով ամեն ինչ տեսնում է > ամեն ինչ տեսնողը > ամենատեսը,

...նա, ով վիճակ է հանում > վիճակ հանողը > վիճակահանը,

...նա, ով մատյան է գրում > մատյան գրողը > մատենագիրը և այլն:

Հարակատար դերբայով հանդես են գալիս հիմնականում այն փոխակերպները (գոյականները), որոնք անձնանիշ են, հմմտ.

...նա, ով կորցրել է հույսը > հույսը կորցրածը > հուսակորույսը²,

...նա, ով ծնվել է հողից > հողից ծնվածը > հողածինը,

...նա, ով նոր է եկել > նոր եկածը > նորեկը և այլն:

Վերադիր. փոխակերպված կառույցներում վերադիրն արտահայտվում է բառակապակցությամբ և ենթակայական դերբայով կամ հարակատարով (անձին վերագրվող հատկանիշի դեպքում):

Ենթակայական դերբայով.

...նա է, ով երախտիքը մոռանում է > երախտիքը մոռացողն է > երախտամոռն է,

² Կորոյս բայահիմքը գրբ. կորնչիմ բայի պատճառականի (կորուսանել) անցյալի հիմքն է (կորոյս):

...նա է, ով մեքենա է վարում > մեքենա վարողն է > մեքենավարն է,
 ...նա է, ով տաղ է ասում > տաղ ասողն է > տաղասացն է,
 ...նա է, ով դարբասն է պահում > դարբասը պահողն է > դարբասապահն է,
 ...նա է, ով օրենքն է պաշտում > օրենքը պաշտողն է > օրինապաշտն է
 և այլն:

Հարակալար դերբայով.

...նա է, ով կորցրել է հույսը > հույսը կորցրածն է > հուսակորույսն է,
 ...նա է, ով ծնվել է հողից > հողից ծնվածն է > հողածինն է,
 ...նա է, ով նոր է եկել > նոր եկածն է > նորեկն է և այլն:

Բ) Սերող միավորներն ու փոխակերպները նախադասության գլխավոր անդամների լրացման դերում

Նախադասության փոխակերպման հետևանքով առաջանում են երկու կարգի բառակապակցություններ և բարդություններ, որոնք, որպես առմիջուկային անդամներ, բաժանվում են երկու խմբի՝ ենթակայի (կամ գոյականական անդամի) խումբ և ստորոգյալի (կամ բայական անդամի) խումբ:

Գոյականական անդամի խումբը կազմում է գոյականական անդամն իր լրացումներով (որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ), բայական անդամի խումբը՝ բայական անդամն իր լրացումներով (խնդիրներ և պարագաներ):

Դիտարկենք այդ միավորների փոխակերպումներն առանձին-առանձին՝ ուշադրություն դարձնելով փոխակերպվող յուրաքանչյուր միավորի պաշտոնակրությանը³:

ա) Սերող միավորներն ու փոխակերպները գոյականական անդամի լրացման դերում

Փոխակերպվող երկրորդական նախադասությունը, ստորոգյալի քերականական արտահայտության առումով, պահպանում է նույն սկզբունքը, ինչ գլխավոր անդամների պաշտոն կատարող երկրորդական նախադասությունների պարագային. նկատի ունենք ստորոգյալի սեռային հատկանիշը (ներգործական):

1. Որոշիչ պաշտոնով փոխակերպումներ

Որոշիչ պաշտոնով լեզվական միավորների փոխակերպումներն այն առանձնա-հատկությունն ունեն, որ փոխակերպման վերջին քայլում փոխակերպներն ունենում են երկու կարգի արտահայտություն՝ *բարդություն և ածանցավոր բառ* կաղապարներով:

ա) Փոխակերպումներ բարդության կաղապարով

Փոխակերպման վերջին քայլում բարդություն (բարդ բառ) ստանում ենք այն դեպքում, երբ սերող նախադասության արտահայտության պլանում առկա է ներգործական սեռի բայ-ստորոգյալ և ուղիղ խնդիր: Փոխակերպված բառակապակցության կառուցվածքում բայ-ստորոգյալը կատարում է դեր-

³ Բայական անդամի լրացումների պաշտոններ կատարող միջուկային նախադասություններին ու նրանց փոխակերպներին կանդրադառնանք առանձին հոդվածով:

բայի, վերջինս էլ բարդության մեջ՝ սերող հիմքի դեր, ինչպես՝ *վիճակ է հանում > վիճակ հանող > վիճակահան, ական է նետում > ական նետող > ականանետ* և այլն:

Այդպիսի բարդությունների վերջնաբաղադրիչը բնորոշվում է հատկանշային իմաստով և ունի հարակատար կամ ենթակայական դերբայի նշանակություն:

Դիտարկենք հետևյալ փոխակերպական կառույցները.

Ենթակայական դերբայի իմաստով.

որ ջուր է հանում > ջուր հանող > ջրհան,

որ տաղ է ասում > տաղ ասող > տաղասաց,

որ արյուն է խմում > արյուն խմող > արյունախում,

որ աստղերն է թռչում > աստղերը թռչող > աստղաթիռ,

որ օրենքն է պաշտում > օրենքը պաշտող > օրինապաշտ և այլն:

Հարակատար դերբայի իմաստով.

որ կոփել են քարերով > քարերով կոփված > քարակոփ,

որ կերտել են ձեռքով > ձեռքով կերտած > ձեռակերտ,

որ ծնվել է հողից > հողից ծնված > հողածին և այլն:

Բառակապակցություն > բարդություն փոխանցման ժամանակ հնարավոր է կապակցության դերբայական անդամի գեղչում, ինչպես՝

որ գանգուր մազեր ունի > գանգուր մազեր ունեցող > գանգրահեր (գանգրամազ),

որ թուխ մաշկ ունի > թուխ մաշկ ունեցող > թխամաշկ,

որ կարմիր շուրթեր ունի > կարմիր շուրթեր ունեցող > կարմրաշուրթ,

որ ազնվական տոհմից է սերում > ազնվական տոհմից սերող սերած > ազնվատոհմ,

որ մեծ տուն (հարստություն) ունի > մեծ տուն ունեցող > մեծատուն և այլն:

Այդ կաղապարով են առաջացել *թխահեր, թխամազ, սևահեր, սևամազ, երկարավիզ, հասարավիզ, հասարափոր, բարակիրան, նրբիրան, գեղիրան, կարմրամորթ, սևազգեստ, լուսնադեմ, երկրևեռ* և այլ բարդություններ:

Դիտարկենք համատիպ կառույցների փոխակերպական քայլերի ընթացքը, որի դեպքում լեզվական բոլոր միավորները հանդես են գալիս որոշիչ շարահյուսական գործառույթով: Օրինակ՝

Հակոբը, որ ծաղիկ է վաճառում, սեփական կրպակ ունի: *Ծաղիկ վաճառող*

Հակոբը սեփական կրպակ ունի: *Ծաղկավաճառ* Հակոբը սեփական կրպակ ունի:

Հնձվորը, որը հույսը կրթել էր, լուռ հեռացավ արտից: *Հույսը կրթած* հնձվորը

լուռ հեռացավ արտից: *Հուսակրուր* հնձվորը լուռ հեռացավ արտից:

Դոյակի պարիսպը, որ շինված է քարերով, դիմանում էր հրետակոծությանը:

Դոյակի՝ *քարերով շինված* պարիսպը դիմանում էր հրետակոծությանը: Դոյակի *քարաշեն* պարիսպը դիմանում էր հրետակոծությանը:

Պարուհին, որ նուրբ իրան ուներ, հմայում էր հանդիսատեսին: Նուրբ իրան ունեցող պարուհին հմայում էր հանդիսատեսին: Նրբիրան պարուհին հմայում էր հանդիսատեսին:

բ) Փոխակերպումներ ածանցման կաղապարով

Փոխակերպական այս գործընթացի վերջին քայլի դեպքում բարդության փոխարեն ունենում ենք ածանցավոր բառ: Ածանցավոր կազմությունները, ինչպես նաև նրանց նախատիպ բառակապակցություններն ու նախադասությունները կատարում են որոշիչ շարահյուսական գործառույթ: Դա երևում է ածանցավոր բառերի արտահայտության պլանից. այդ կարգի ածանցները ածականակերտ ձևայիններ են: Ածանցավոր բառերը, որպես փոխակերպներ, ունեն նախաածանցավոր և վերջածանցավոր կազմություն:

- *Նախաածանցավոր կազմություններ.* այդ կարգի բառերը հիմնականում ժխտական նախածանցով կազմություններ են. ժխտական նախածանցը ժխտում, բացառում է սերող կաղապարի (ածականի) արտահայտած հատկանիշը:

Այդպիսի բաղադրություններն արտահայտում են «մի բան չունեցող, մի բանից զուրկ» նշանակություն՝ պայմանավորված ածանցի բառակազմական իմաստով: Տվյալ դեպքում, մինչև ածանցավոր կազմության ձևավորումը, հատկանիշի բացակայությունն արտահայտվել է նյութական նշանակություն ունեցող բառերով (մի բան չունեցող, մի բանից զուրկ և այլն):

Դիտարկենք այս կաղապարով փոխակերպական քայլերի ընթացքը:

Այն մարդը, որ փուն չունի, մոլորված է: Տուն չունեցող մարդը մոլորված է: Անարուն մարդը մոլորված է:

Շրջմոլիկը, որ բախար չուներ, թափառում էր ծովափին: Բախար չունեցող շրջմոլիկը թափառում էր ծովափին: Անբախար շրջմոլիկը թափառում էր ծովափին:

Կտավը, որ զուրկ է գույնից, անհրապույր է: Գույնից զուրկ կտավը անհրապույր է: Դժգույն // անգույն կտավը անհրապույր է (որոշիչ):

- *Վերջածանցավոր կազմություններ.* փոխակերպման վերջին քայլում ածանցավոր կազմություններն ստանում են այնպիսի ածանցներ, որոնք արտահայտում են «մի բան ունեցող՝ պարունակող» նշանակություն: Այդպիսի վերջածանցներ են՝ *-անի, -ավեպ, -ավոր, -եղ / ե, -յա, -ոյ, -ուն* և այլն:

Դիտարկենք ածանցավոր այս բառերի սերող կաղապարները (Խաչատրյան, 2022, էջ 175-188):

-Անի. Բնակարանը, որ երկու հարկ ունի, գտնվում է անտառի եզրին: *Երկու հարկ ունեցող* բնակարանը գտնվում է անտառի եզրին: *Երկհարկանի* բնակարանը գտնվում է անտառի եզրին:

-Ավեպ. Ծաղիկը, որ բույր ունի, դրված է ծաղկամանի մեջ: *Բույր ունեցող* ծաղիկը դրված է ծաղկամանի մեջ: *Բուրավեպ* ծաղիկը դրված է ծաղկամանի մեջ:

-Ավոր. Այն մարդը, որ բախար ունի, միշտ ուրախ է: *Բախար ունեցող* մարդը միշտ ուրախ է: *Բախարավոր* մարդը միշտ ուրախ է:

-Եղ. Ճաշը, որ համ է պարունակում, ախորժելի է: Համ պարունակող ճաշը ախորժելի է: Համեղ ճաշը ախորժելի է:

-Յա. Աղջիկը, որ սև աչքեր ունի, գրավիչ է: Սև աչքեր ունցող աղջիկը գրավիչ է: Սևաչյա աղջիկը գրավիչ է:

-Ուր. Ճաշը, որ (շապր) յուղ է պարունակում, դժվարամարս է: Յուղ պարունակող ճաշը դժվարամարս է: Յուղուր ճաշը դժվարամարս է:

-Ուն. Աշակերտը, որ շապր բան գիրի, ուսուցչի հպարտությունն է: Շապր բան գիրեցող (իմացող) աշակերտը ուսուցչի հպարտությունն է: Գիրունն աշակերտը ուսուցչի հպարտությունն է⁴:

Որպես փոխակերպական գործընթացի վերջին քայլի դրսևորում՝ ածանցավոր բառերի վերջածանցը կարող է համարժեք լինել հոլովական վերջավորությանը՝ հոլովամասնիկներին (բացառական կամ գործիական հոլովների): Հոլովամասնիկները ձևավորվել են վերացարկման ավելի բարձր աստիճանում. նրանց արտահայտած իմաստն ավելի վերացարկված է, քան ածանցներիը: Օրինակ՝

Սեղանը, որ պայրասարված է փայտից, դրված է սենյակի կենտրոնում (որոշիչ):

Փայտից պայրասարված սեղանը դրված է սենյակի կենտրոնում (որոշիչ): Փայտե // փայտյա սեղանը դրված է սենյակի կենտրոնում (որոշիչ): Փայտից սեղանը դրված է սենյակի կենտրոնում (որոշիչ):

Գդալը, որ պայրասարված է արծաթից, արժեքավոր է: Արծաթից պայրասարված գդալը արժեքավոր է: Արծաթե // արծաթյա գդալը արժեքավոր է: Արծաթից գդալը արժեքավոր է:

Այդպես նաև՝ ... ուժ ունեցող > ուժեղ // ուժով, ...համ ունեցող > համեղ// համով,...սկնոց կրող > սկնոցավոր // անկնոցով և այլն:

Հատկացուցչի պաշտոնով փոխակերպումներ

Հատկացուցչի պաշտոնով լեզվական միավորների փոխակերպումներն այն առանձնահատկությունն ունեն, որ միջուկային (սերող) նախադասության մեջ առկա է ձևական անդամ՝ հատկացուցչի պաշտոնով, որին փոխակերպական կառույցներում փոխարինում է դերբայական բառակապակցությունը կամ բարդությունը՝ շարահյուսական նույն պաշտոնով: Հմմտ.

Լսեցինք նրա պատմությունը, ով մայրյան էր գրում > լսեցինք մայրյան գրողի պատմությունը > լսեցինք մայրենագրի պատմությունը: Մեզ գրավեցին նրա երգի ելևէջները, ով փառ էր ասում > մեզ գրավեցին փառ ասողի (փառ ասացողի) երգի ելևէջները > մեզ գրավեցին փառասացի երգի ելևէջները և այլն:

Այդպիսի բարդությունների վերջնաբաղադրիչը հիմնականում ունի ենթակայական դերբայի իմաստ:

Դիտարկենք հետևյալ փոխակերպական կառույցները.

...նրա հմայքը, ով խաղում է լարերի վրա > լարերի վրա խաղացողի հմայքը > լարախաղացի հմայքը,

⁴ Նկատի չունենք բարդության տարբերակը՝ շապր բան իմացող > բանիմաց:

... նրա հնտությունը, ով հաց է թխում > հաց թխողի հնտությունը > հաց-թուխի հնտությունը,

...նրա կարծիքը, ով բախար է գուշակում > բախար գուշակողի կարծիքը > բախարագուշակի կարծիքը,

...նրա արագությունը, որ բեռներ է տանում > բեռներ տանողի արագությու-
նը > բեռնատարի արագությունը,

...նրա վերաբերմունքը, որ երախարիքը մոռանում է > երախարիքը մոռա-
ցողի վերաբերմունքը > երախարամոռի վերաբերմունքը,

...նրա զգուշությունը, որ մեքենա է վարում > մեքենա վարողի զգուշությու-
նը > մեքենավարի զգուշությունը,

...նրա ցատկը, որ դարբասն է պահում > դարբասը պահողի ցատկը > դար-
բասապահի ցատկը,

...նրա նվիրումը, ով օրենքն է պաշտում > օրենքը պաշտողի նվիրումը > օրինապաշտի նվիրումը,

...նրա նամակը, ով լուր էր բերում > լուր բերողի նամակը > լրաբերի նա-
մակը և այլն:

2. Բացահայտչի պաշտոնով փոխակերպումներ

Բացահայտչի պաշտոնով լեզվական միավորների փոխակերպումների դեպքում նույնպես միջուկային (սերող) նախադասության մեջ առկա է ձևա-
կան անդամ՝ բացահայտչի պաշտոնով, որին փոխակերպական կառույցնե-
րում փոխարինում է դերբայական բառակապակցությունը կամ բարդությու-
նը՝ նույն պաշտոնով:

Բարդ նախադասության մեջ երկրորդական նախադասությունը կատա-
րում է բացահայտչի պաշտոն, երբ լրացնում է գլխավոր նախադասության
դերանվանական անդամին կամ հատկանվանը:

Դիտարկենք հետևյալ փոխակերպական կառույցները.

Լուռ սպասում ենք նրան, ով բախար է գուշակում > լուռ սպասում ենք
նրան՝ բախար գուշակողին > լուռ սպասում ենք նրան՝ բախարագուշակին:

Մենք սիրով լսում ենք նրան, ով ձառ է ասում > մենք սիրով լսում ենք
նրան՝ ձառ ասողին > մենք սիրով լսում ենք նրան՝ ձառասացին:

Իմ ընկերը Վահանն է, որ լուր է բերում > իմ ընկերը Վահանը՝ լուր բե-
րողն է,

իմ ընկերը Վահանը՝ լրաբերն է:

Մենք սիրով ենք վերաբերվում Վահանին, որ լուր է բերում >... Վահանին՝
լուր բերողին > Վահանին՝ լրաբերին:

Մենք դժվարությամբ բաժանվեցինք Վահանից, որ լուր է բերում >
...Վահանից՝ լուր բերողից > Վահանից՝ լրաբերից:

Մենք պարծենում ենք Վահանով, որ լուր է բերում > ...Վահանով՝ լուր
բերողով > Վահանով՝ լրաբերով:

Այսպիսով, մենք դիտարկեցինք նախադասություն > բառակապակցությու-
նը > բաղադրություն փոխակերպման այն դրսևրումը, որի դեպքում միջու-
կային նախադասություններն ու նրանց փոխակերպները կատարում են նա-
խադասության գլխավոր անդամների և գոյականական անդամի լրացում-

ների պաշտոններ՝ շարահյուսական մակարդակում ցուցաբերելով գործառական ընդհանրություն (նույնություն):

Եզրակացություն

Ելակետային կամ միջուկային նախադասությունից սերած հաջորդական փոխակերպները (բառակապակցություններն ու բաղադրյալ բառերը) շարահյուսական մակարդակում կատարում են նույն պաշտոնները՝ հանդես գալով նախադասության գլխավոր անդամների (ենթակայի և վերադրի), ինչպես նաև գոյականական անդամների լրացման դերով (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ): Փոխակերպական գործընթացում որոշակի յուրահատկություն են դրսևորում բաղադրությունները, որոնք հանդես չեն գալիս բարդության և ածանցման կաղապարներով. ընդ որում՝ ածանցման կաղապարներն ունեն երկու կարգի դրսևորում՝ նախաածանցում և վերջածանցում: Մյուս կողմից՝ որոշ վերջածանցների համապատասխանում են որոշակի հոլովական վերջավորություններ: Նախադասություն –բառակապակցություն–բաղադրություն փոխակերպման գործընթացում փոխակերպների իմաստային բեռնվածությունը կրում է բայական բաղադրիչը՝ բառակապակցության պլանում հանդես գալով որպես դերբայական վարձվածի գերադաս անդամ, իսկ բարդության պլանում՝ որպես բայահիմք և հիմնաբաղադրիչ:

Միջուկային նախադասությունների և նրանց փոխակերպների շարահյուսական–գործառական ընդհանրությունը պայմանավորված է փոխակերպման իրողության տրամաբանությամբ. փոխվելով լեզվական միավորների արտահայտության պլանը՝ պահպանվում է նրանց բովանդակության պլանը, որն էլ ենթադրում է համագործառական պաշտոնակրություն շարահյուսական մակարդակում:

Օգտագործած գրականություն

Բանբեր հայագիտության (2022) ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, N 2(29), Երևան:

Խաչատրյան, Լ. (2022) Փոխակերպումը որպես լեզվական արտացոլման վերացարկված մեխանիզմ, *Բանբեր հայագիտության*, «Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, N 2(29), Երևան:

Խաչատրյան, Լ. (2021) *Լեզվաբանական բառարան*, «Զանգակ» հրատարակչություն, Երևան:

Խաչատրյան, Լ. (2016) *Ընդհանուր լեզվաբանության դասընթաց*, «Զանգակ» հրատարակչություն, Երևան:

Պետրոսյան, Հ. (1987) *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան:

Պետրոսյան, Հ. և ուրիշներ (1975) *Լեզվաբանական բառարան*, «Հայաստան» հրատարակչություն, Երևան:

Ջահուկյան, Գ. (974) *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Հայկական ՍՍՀ ԳԱ» հրատարակչություն, Երևան:

Ахманова, О.С. (1969). *Словарь лингвистических терминов*, «Советская энциклопедия» издат., Москва.

Стариченок, В.Д. (2008) *Большой лингвистический словарь*, «Феникс» издат., Ростов-на-Дону.

References

- Banber hayagitutan* [Journal of Armenian Studies] (2022) HH gitut'yunneri azgayin akademia, N 2(29), Yerevan. (In Arm.)
- Khachatryan, L. (2022) P'vokhakerpomy vorpes lezvakan artats'volman verats'arkvats mekhanizm [Transformation as an abstraction of linguistic reflection Mechanism]. *Banber hayagitut'yan*, «Haykakan SSH GA» hratarakch'ut'yun, N 2(29), Yerevan. (In Arm.)
- Khachatryan, L. (2021) *Lezvabanakan barraran* [Linguistic dictionary]. “Zangak 97” hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Khachatryan, L. (2016) *Yndhanur lezvabanut'yan dasynt'ats'* [General linguistics course]. “Zangak 97” hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Petrosyan, H. (1987) *Hayerenagitakan barraran* [Armenology Dictionary]. “Hayastan” hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Petrosyan, H. and others (1975) *Hayerenagitakan barraran* [Armenology Dictionary]. “Hayastan” hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Jahukyan, G. (1974) *Zhamanakakits' hayereni tesut'yan himunk'nery* [Basics of the theory of modern Armenian], „Haykakan SSH GA” hratarakchutyun, Yerevan. (In Arm.)
- Akhmanova, O.S. (1969) *Slovar' lingvističeskikh terminov* [Dictionary of linguistic terms], „Sovetskaya entsiklopediya” hratarakchutyun, Moscow. (In Russ.)
- Starichenok, V.D. (2008) Large Linguistic Dictionary [Bolshoy lingvisticheskiy slovar], „Fenix” hratarakchutyun, Rostov-on-Don. (In Russ.)

Маргуш Мирумян

*Доцент кафедры родного языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им.Х.Абовянуа, кандидат педагогических наук
Эл. адрес: mirumyan1951@mail.ru*

СИНТАКСИЧЕСКИЕ ФУНКЦИИ ЯДЕРНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ И ИХ ТРАНСФОРМАЦИЙ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Трансформации ядерных предложений в армянском языке – словосочетания и составные слова на уровне синтаксиса выполняют аналогичную им функцию, выступая в качестве главных членов предложения, а также в качестве определений к членам, выраженным субстантивом. В процессе трансформации определенные особенности проявляются у составных слов, которые выступают в виде сложных и производных образований, причем производные образования бывают двух типов: префиксальные и суффиксальные. Некоторые суффиксы соответствуют определенным падежным окончаниям.

В преобразовании предложение – словосочетание – составное слово функ-

цию трансформации выполняет глагол, на уровне словосочетания выступая в роли главного члена причастного оборота, а в составе сложного слова – как глагольная основа и главный компонент.

Синтаксическая общность ядерных предложений и их трансформаций обусловлена логикой перехода: при изменении плана выражения языковой единицы ее содержание сохраняется, что на уровне синтаксиса предполагает функциональную идентичность.

Ключевые слова: трансформация, предложение, словосочетание, сложные слова, производные слова, подлежащее, предикатив, определение, приложение.

Margush Mirumyan

*Associate Professor at the Department of Mother Tongue and
its Teaching Methodology at
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, PhD in Pedagogy
Email: mirumyan1951@mail.ru*

TRANSFORMATIONS IN THE ARMENIAN LANGUAGE

Transformations of basic and nuclear sentences in the Armenian language, i.e. phrases and compound words at the level of syntax perform a similar function, acting as the main members of the sentence, as well as attributes to the members expressed by the substantive. In the process of transformation, certain features are manifested in compound words, which appear in the form of complex and derived formations, and the derivatives of the formation can be of two types: prefixal and suffixal ones. Some suffixes correspond to certain case endings. In the transformation by the model of sentence–phrase–compound word, the function of transformation is performed by the verb, at the level of the phrase acting as the main member of the participial construction, and as part of a compound word – as a verbal base and the main component.

The syntactic commonality of nuclear sentences and their transformations is due to the logic of the transition: when the expression plan of a language unit changes, its content is preserved, which implies functional identity at the syntax level.

Key words: transformation, transformant, sentence, phrase, compound words, derivative words, subject, predicate, definition, application.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 19-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 25-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին: